

2016 թ. ապրիլի 26-ին Կ. Դեմիրճյանի անվան ՄՀՀ-ում Էրոս Ռամազոտի չեղարկված համերգի տոմսերը կարող եք վերադարձնել 2016 թ. սեպտեմբերի 15-ին հետևյալ կարգով.

Վերադարձի ընդունվում են միայն Ընկերությանն ուղղված գրավոր դիմումի հիման վրա: Դրամական միջոցների վճարումը տվյալ անձին իրականացվում է դիմողի անձը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում:

Այդ նպատակով հատուկ ստեղծվել է էլեկտրոնային փոստ՝ [eros-ramazzotti@mail.ru](mailto:eros-ramazzotti@mail.ru), որպեսզի դիմումներն ուղարկվեն հաշվապահություն՝ հաշվարկման նպատակով: Դրանից հետո կձևավորվի սպասման (հերթականության) թերթիկ, որտեղ կնշվի վերադարձի անհատական ժամանակը:

Վճարումներն իրականացվելու են կենտրոնացված կարգով և միայն «Շոուսթար» ընկերության միջոցով մարզահամալիրի տոմսարկղում:

Այն տոմսերը, որոնց վրա առկա են ցանկացած տեսակի ուղղումներ կամ ինչ-ինչ տվյալներ բացակայում են, ինչպես նաև վնասված տոմսերը, վերադարձման ենթակա չեն:

Վերադարձն իրականացվելու է միայն դիմումի բնօրինակի առկայության դեպքում: Դիմումի ներկայացման ժամանակ անձնագրի առկայությունը պարտադիր է: Տոմսերի վերադարձի գործընթացն առավել քիչ ժամանակատար դարձնելու նպատակով, պետք է ներկայացնել հատուկ դիմում, որի օրինակը ներկայացված է մեր կայքէջում: (<http://www.forpostart.ru/site/77> էջի ներքևում):

Եվս մեկ անգամ խնդրում ենք համերգային ծրագրի տոմսեր ձեռք բերած բոլոր անձանց անվնաս և ամբողջական պահպանել տոմսերը՝ հետ վերադարձնելու համար: Հետևեք մեր պաշտոնական կայքին:

Միաժամանակ հայտնում ենք, որ մեր ներկայացրած պայմաններին չհամաձայնելու դեպքում կարող եք դրանք բողոքարկել դատական կարգով: Մեր ընկերության վարչակազմը անկեղծորեն ավստում է այս իրավիճակի համար:

Լավագույն մաղթանքներով՝

«Ֆորպոստարտ» ընկերության ադմինիստրացիա

[www.forpostart.ru](http://www.forpostart.ru)